ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 1

2020թ. սեպտեմբերի 4-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում
2. 2020-2021 ուստարվա նախապատրաստական աշխատանքների հարցը
3. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները
4. 2020-2021 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում
5. ընտրություններ
6. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 20-ը

**1. Լսեցին** - 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց կիսամյակի աշխատանքային պլանը

**Որոշեցին** – հաստատել 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանը:

**2. Լսեցին** - 2020-2021 ուստարվա նախապատրաստական աշխատանքների հարցը

**Արտահայտվեցին** – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը հաղորդեց, որ բոլոր անհրաժեշտ դասացուցակները կազմված են, լուծարքների ժամանակացույցը կազմված է:

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**3. Լսեցին** – 2020-2021 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները:

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց ընդունելության արդյունքները՝ սեպտեմբերի 4-ի դրությամբ ուսանողների թիվը կազմում է.

առկա բակալավրիատ՝ 123 ուսանող

մագիստրատուրա՝ 51 ուսանող

**Որոշեցին** – ընդունելության արդյունքները համարել բավարար:

**4. Լսեցին** –2020-2021 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին ներկայիս իրավիճակում ծառացած խնդիրները և ըստ պրակտիկայի վարչության հրահանգի՝ պրակտիկան կմեկնարկի առցանց, ուշացումով:

**Որոշեցին** – կատարված աշխատանքները համարել բավարար:

**5. ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի դասախոս Լիլիթ Անատոլիի Գրիգորյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա.Հակոբյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Աղամյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Լիլիթ Գրիգորյանը ունի երկար տարիների աշխատանքային փորձ, բարեխիղճ և պատասխանատու է մանկավարժական գործունեության մեջ: Ունի համապատասխան քանակի հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, ցուցահանդեսների մասնակցություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին Կերպարվեստի ամբիոնի դասախոս Լիլիթ Անատոլիի Գրիգորյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 20-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ-20

Դեմ- 0

Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 2**

2020թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա ուսուցման լուծարքային փուլի արդյունքների ամփոփում
2. 2020-2021 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում
3. ընտրություններ
4. ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 20-ը

**1. Լսեցին** - 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի առկա ուսուցման լուծարքային փուլի արդյունքների ամփոփում

**Արտահայտվեցին** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020, որ այս պահի դրությամբ հեռացվել է 4 ուսանող:

**Որոշեցին** – համարել բավարար:

**2. Լսեցին** - 2020-2021 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրեցին 1-ին կուրսերի մագիստրատուրայի ատենախոսությունների թեմաները՝

**Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն**

**Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում մասնագիտություն**

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցու ծիսական ասեղնագործ առարկաների վերականգնման անհրաժեշտությունը:
2. Արսեն Շաբանյանի կավճանկարները:
3. Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում հայ արվեստի 2014-2015 և 2018-2019թթ. ցուցահանդեսների վերլուծությունը:
4. Երևանյան տեսարանները խորհրդահայ կերպարվեստում:
5. Եգիպտահայ մշակույթի նշանավոր գործիչ՝ Օննիկ Ավետիսյանի ժառանգությունը:
6. Ձեռարվեստի նմուշների թվայնացումը և կիրառումը ուսումնական ծրագրերում:
7. Փարաքարի մշակութային օջախների մենեջմենթը:
8. Մշակութային մենեջմենթը Գյումրի քաղաքի զարգացման գործում:
9. Հայ գեղանկարիչների գործունեությունը Իտալիայում. Գրիգոր Շլղյան, Ժիրայր Օրաքյան:
10. Մոդեռնիզմի արձագանքները հայ արվեստում (XX-րդ դար):
11. Ազգային տարազը ժամանակակից կենցաղային մշակույթում:

**Մշակութաբանություն**

1. Հանրային հեռուստատեսության մշակութային հաղորդումների վերլուծությունը:
2. Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցանկերում քննարկվող ազգային արժեքները և դրանց վերլուծությունը:
3. Սոս Սարգսյանի գրական ժառանգությունը:
4. Փայտարվեստի թանգարանի հմայիլների հավաքածուն:

**Երաժշտության մանկավարժության ամբիոն**

1. Ինտոնացիոն մտածողության ձևավորումը որպես «Երաժշտություն» առարկայի կարևոր խնդիր
2. Առնո Բաբաջանյանի կինոերաժշտությունը «Երաժշտություն» առարկայի դասընթացում
3. Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը երաժշտության միջոցով (հիմնական դպրոցի V-VII դասարաններում)

4. Ալեքսանդր Հարությունյանի «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ պոեմի ուսուցումը երաժշտության դասին
5. Վլադիլեն Բալյանի երգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում
6. Մոխրոտի կերպարի դաստիարակչական դերը երաժշտության մեջ

**Կերպարվեստի ամբիոն**

1. Էկրանային միջոցների օգտագործման առանձնահատկությունները կերպարվեստի պարապունքներին
2. Էլեկտրոնային դասագրքերի կիրառումը արվեստի ուսուցման գործընթացում
3. Հանրակրթական դպրոցներում կերպարվեստ առարկայի ծրագիրը դասագրքերում և ալբոմներում
4. Թեմատիկ նկարչության պարապմունքները որպես սովորողների ստեղծագործական երևակայության զարգացման միջոց
5. Սովորողների ազգային ինքնագիտակցության դրսևորումները մատենական նկարչության պարապմունքներին
6. Գեղարվեստական ձևավորումը որպես սովորողների գեղագիտական աշխարհայացքի զարգացման միջոց
7. Խորհրդանիշի գեղարվեստական և ոճաբանական գործառույթը կերպարվեստում
8. Պլեները որպես նկարչի գեղարվեստական կրթության միջոց
9. Զրույցները արվեստի մասին, որպես կերպարվեստի պարապմունքների առանձնահատուկ տեսակ
10. Բնանկարի կատարման տեխնոլոգիաների առանձնահատկությունները
11. Դիմանկարի կառուցման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
12. Ուսումնական նատյուրմորտի կառուցվածքը և նրա օրինաչափությունները (միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում)
13. Քանդակագործության և ճարտարապետության համադրումը որպես անձի գեղագիտական ճաշակի զարգացման գործոն (Երևան քաղաքի օրինակով)
14. Ծեփակերտման առանձնահատկությունները արտադպրոցական դասընթացներում
15. Համակարգչային գրաֆիկայի ուսուցման դերը դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման գործընթացում
16. Ուսանողների գեղարվեստական ունակությունների զարգացումը համակարգչային գրաֆիկայի ուսուցման գործընթացում
17. Համակարգչային գրաֆիկայի ուսումնական նմուշօրինակի ձևավորման մանկավարժական պայմանները ՄՄՀ-ում
18. Ստեղծագործական երևակայության ձևավորումը եռաչափ գրաֆիկայի միջոցներով ՄՄՀ-ում
19. Պատկերման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը որպես դպրոցականների ստեղծագործական զարգացման միջոց
20. Համակարգչային գրաֆիկայի տարրերի ուսուցման հիմնախնդիրը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
21. Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցման միջոցները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
22. Համակարգչային գրաֆիկայի ուսուցման մեթոդիկան դպրոցական կրթական գործընթացում
23. Ֆրանսիական դաջազարդ գործվածքների արվեստը/16-18րդ դդ/
24. Հայկական ոստայնանկությունը և նրա ներկման արհեստը
25. Հայկական մոնումենտալ-դեկորատիվ արվեստ/20-րդ դ/
26. Հայ և համաշխարհային /արևելք, արևմուտք/ զարդարվեստի առանձնահատկությունները
27. Զարդանախշային մոտիվների և հորինվածքի կառուցման սկզբունքները գեղարվեստական գործվածքների արվեստում
28. Զարդանախշի կիրառման առանձնահատկությունները ազգային տարազում
29. Հայ առաքելական եկեղեցու խորհրդանշանները, ծագումնաբանությունը
30. Նոր դարաշրջանի ազգային խորհրդանշանները/18-19-րդ դդ/
31. Մանածագործական /տեքստիլ/ նմուշների գեղարվեստական ձևավորման ժամանակակից միջոցները /տեսակները և հնարները/
32. Արևելյան գորգերի/կարպետների/ ազգային առանձնահատկությունները

33.Արցախի ժանյակագործության սոցիալ-մշակութային առանձնահատկությունները
34.Հնագույն գործվածքների արվեստը
35.Գեղարվեստական արհեստների ազգային առանձնահատկությունները
36.Գեղարվեստական գործվածքների արվեստը նորաձևության մեջ
37.Նորաձևության ոճային բազմազանության միտումները 20-րդ դարի երկրորդ կեսին
38.Կենցաղում կիրառվող նախշազարդ իրերի ազգային առանձնահատկությունները
39.Փայտի գեղարվեստական մշակումը հայկական եկեղեցաշինության բնագավառում

**Որոշեցին** – Հաստատել 2020-2021 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաները:

**3. ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի դասախոս Դավիթ Վանյայի Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա.Հակոբյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Աղամյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Դավիթ Հովհաննիսյանը ունի երկար տարիների աշխատանքային փորձ, հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր մասնագիտական կարողություններ, բարեխիղճ և պատասխանատու է մանկավարժական գործունեության մեջ: Ունի համապատասխան քանակի հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, ցուցահանդեսների մասնակցություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին Կերպարվեստի ամբիոնի դասախոս Դավիթ Վանյայի Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 18-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ-18
Դեմ- 0
Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 3

2020թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (առցանց)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփում
2. 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում
3. Գիտական աշխատանքների հաշվետվություն, ֆակուլտետի ամբիոններ
4. 2020-2021 ուստարվա ավարտական աշխատանքների ընթացքը
5. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը
6. 2019-2020 ուստարվա հեռակա բակալավրիատի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփում
7. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 19-ը

1. **Լսեցին** - 2019-2020 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփման հարցը

**Արտահայտվեցին** – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփումը

| | բակալավրիատ առկա | մագիստրատուրա |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| ընդամենը | 313 | 17 |
| դրական | 282 | 16 |
| պայմանական փոխադրվել է | 16 | - |
| հեռացման է ներկայացվել | 15 | 1 |

**Որոշեցին** – աշխատանքային ընթացքը համարել բավարար:

**2.Լսեցին** – 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում:

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքները.

կերպարվեստ՝ 8

երաժշտության մանկավարժություն՝ 9

ընդհամենը՝ 17 ուսանող

**Որոշեցին** – ընդունելության արդյունքները համարել բավարար

**3. Լսեցին** - Գիտական աշխատանքների հաշվետվությունների (ֆակուլտետի ամբիոններ) հարցը

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի ամբիոնների վարիչներ Կ.Աղամյանը, Ս.Էլբակյանը, Ս.Մելիքյանը հաղորդեցին, որ ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակվել են. կերպարվեստի ամբիոն՝ 1 հոդված, երաժշտության մանկավարժության ամբիոն՝ 4 հոդված, 1 մենագրություն, 1 գիրք, հանձնված են տպագրության 8 հոդված, 2 գիրք, 1 դասագիրք, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն՝ 6 հոդված, 1 գիրք, 1 ձեռնարկ, հանձնված է տպագրության 1 հոդված, 1 դասագիրք:

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**4. Լսեցին** –2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների ընթացքի մասին

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի ամբիոնների վարիչներ՝ կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը ներկայացրեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Նրանք նշեցին, որ աշխատանքները ընթանում են համապատասխան աշխատանքային գրաֆիկի:

**Որոշեցին** – կատարված աշխատանքները համարել բավարար:

**5. Լսեցին** – Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը

**Արտահայտվեցին** – Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը նշեցին, որ ամբիոնների վերջին նիստերում կատարվել են համապատասխան ատեստավորումներ.

կերպարվեստի ամբիոն՝ Լիլիթ Ներսիսյանը ատենախոսության թեմայի շրջանակներում հավաքել և մշակել է ատենախոսության 2 գլուխ, մասնակցել է միջազգային գիտաժողովի, Հասմիկ Մանասյանը ավարտել է 2-րդ գլխի գիտասեսական հիմնավորմանը անհրաժեշտ նյութերի հավաքագրումը և շարադրանքը, Մարուսյա Մանասյանը աշխատում է ատենախոսության 3 գլխի շարադրանքի վրա, Միհրդատ Մոմենին աշխատում է ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխների վրա, Գագիկ Ավետիսյանը ավարտել է 1-ին գլխի գիտատեսական հիմնավորման նյութերի հավաքագրումը, Տարոն Ալեքսանյանը աշխատում է թեմայի գիտական հիմնավորման և նյութերի հավաքագրման ուղղությամբ:

Երաժշտության մանկավարժության ամբիոն՝ Գայանե Հարությունյանը աշխատում է ատենախոսության խմբագրման շուրջ, Մերի Բաղդասարյանը աշխատում է ատենախոսության 3-րդ գլխի վրա:

**Որոշեցին** – Ատեստավորել՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդներ Մերի Բաղդասարյանին և Գայանե Հարությունյանին, կերպարվեստի ամբիոնի հայցորդներ Հասմիկ Մանասարյանին, Լիլիթ Ներսիսյանին, Մարուսյա Մանասյանին, Միհրդատ Մոմենիին, Գագիկ Ավետիսյանին, Տարոն Ալեքսանյանին:

**6. Լսեցին** - 2019-2020 ուստարվա հեռակա բակալավրիատի քննաշրջանի պարտքերի մարման ամփոփման հարցը

**Արտահայտվեցին** – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա հեռակա բակալավրիատի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփումը

| | բակալավրիատ հեռակա |
|---|---|
| ընդամենը | 178 |
| դրական | 153 |
| պայմանական փոխադրվել է | 25 |
| հեռացման է ներկայացվել | - |

**Որոշեցին** – աշխատանքային ընթացքը համարել բավարար:

ընթացիկ հարցեր

**7.Լսեցին** – Երևան-Յարոսլավլ ելույթների անցկացման հարցը (գրությունը ստացվել է գիտահետազոտական բաժնից 25.11.2020թ.)

**Արտահայտվեցին** – Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր Յու.Յուզբաշյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը՝ նշելով, որ ներկայացված թեմաները հետաքրքրական են և նպատակահարմար անցկացման համար:

**Որոշեցին** - նպատակահարմար է Երևան-Յարոսլավլ ելույթների անցկացումը:

**8.Լսեցին** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Սերգեյի Հարությունյանի ատենախոսության խորագրի և ատենախոսության ղեկավարի հաստատման հարցը:

**Արտահայտվեցին** – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանին, և ատենախոսության խորագիրը «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց»:

**Որոշեցին** – Հաստատել Գայանե Սերգեյի Հարությունյանի ղեկավար մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանին, և հաստատել «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» ատենախոսության խորագիրը համապատասխան ԲՈԿ-ի ԺԳ.00.02 դասիչի:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 4

2020թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ, որն անց է կացվել բանավոր հարցման ձևով

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2020թ. հաշվետվության հարցը

**1. ԼՍԵՑԻՆ** - Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2020թ. գործողությունների տարեկան հաշվետվության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը, ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆեսորի պ/կ Ս. Էլբակյանը, արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ

Ս.Մելիքյանը նշեցին, որ 2020թ. ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոն կատարել է հաշվետվություն, որոնք և հիմք են հանդիսացել ֆակուլտետի հաշվետվության համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել 2020 թվականի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հաշվետվությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5**

2020թ. դեկտեմբերի 29-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

(բանավոր հարցման ձևով)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Զարգացման ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների կատարման հաշվետվությունը

**ԼՍԵՑԻՆ** – Զարգացման ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների կատարման հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց 2020 թվականի ֆակուլտետի ռազմավարական ծրագրի շրջանակներում կատարված համապատասխան կետերը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել զարգացման ռազմավարական ծրագրի 2020 թվականի գործողությունների կատարման հաշվետվությունը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6**

2021թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության

ֆակուլտետի խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում

2.2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվություն

3.2020-2021 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում

4. Ընթացիկ հարցեր

**1. Լսեցին** - 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց կիսամյակի աշխատանքային պլանը

**Որոշեցին** – հաստատել 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանը:

**2. Լսեցին** – 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվությունը

**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները

**Որոշեցին** – Արդյունքները համարել բավարար։

| *Ֆակուլտետ /մասնագիտությունը/* | Կուրս | ուս. թիվը | Քննությունների մասնակցել են | դրական նիշով հանձնել են | անբավարար են ստացել | | | ազատված |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1առարկ. | 2առարկ. | 3 և ավելի | |
| ***Բակալավր*** | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| *Կերպարվեստ կերպարվեստ և գծագրություն* | I | 44 | 39 | 15 | *19* | 3 | 2 | 3 ազատ.<br>1 չի մասն. |
| | II | 33 | 32 | 30 | *1* | 1 | - | 1 ազատ. |
| | III | 28 | 27 | 17 | *4* | 3 | 3 | 1 չի մասն. |
| | IV | 36 | 36 | 23 | *10* | - | 3 | - |
| *Արվ.տես.պատմ.և կառավ.* | I | 6 | 5 | 5 | - | - | - | 1 ազատ.դ. |
| | II | 4 | 4 | 4 | - | - | - | - |
| | III | 5 | 5 | 4 | - | - | 1 | - |
| | IV | 8 | 8 | 7 | - | - | 1 | - |
| *Մշակութաբանություն* | I | 11 | 11 | 10 | - | - | - | - |
| | II | 5 | 5 | 4 | *1* | 1 | - | - |
| | III | 2 | 2 | 2 | - | - | - | - |
| | IV | 14 | 14 | 11 | - | - | - | - |
| *Հագուստի մոդելավորում* | I | 28 | 28 | 25 | *2* | - | 1 | - |
| | II | 27 | 27 | 23 | *4* | - | - | - |
| | III | 12 | 12 | 7 | *2* | 1 | 2 | - |
| | IV | 11 | 11 | 9 | *1* | 1 | - | - |
| *Դեկոր.կիրառ. արվեստ* | I | 13 | 13 | 2 | *9* | 2 | - | - |
| | II | 20 | 19 | 16 | *2* | 1 | - | 1 չի մասն. |
| | III | 15 | 15 | 12 | *2* | 1 | - | - |
| | IV | 18 | 18 | 5 | *7* | 5 | 1 | - |
| *Երաժշտական կրթութ.* | I | 20 | 19 | 14 | *2* | 2 | 1 | 1 ազատ. |
| | II | 28 | 28 | 19 | *1* | 1 | 6 | - |
| | III | 14 | 14 | 8 | *1* | 1 | 2 | - |
| | IV | 23 | 23 | 13 | *2* | 2 | 1 | - |
| ***ուսանող. թիվ*** | | *425* | *415* | 285 | 81 | 25 | 24 | 9 |
| ***Մագիստրատուրա*** | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| *Կերպարվեստ* | I | 15 | 15 | 12 | 1 | 2 | - | - |
| | II | 5 | 5 | 5 | - | - | - | - |
| *Արվ.տես.պատմ.և կառավ.* | I | 11 | 10 | 10 | - | - | - | 1 ազատ. |
| | II | 2 | 2 | 2 | - | - | - | - |
| *Մշակութաբանություն* | I | 4 | 4 | 4 | - | - | - | - |
| | II | 2 | 2 | 1 | 1 | - | - | - |
| *Դեկոր.կիրառ. արվեստ* | I | 8 | 6 | 5 | 1 | - | - | 2 չի մասն. |
| | II | 3 | 3 | 3 | - | - | - | - |
| *Երաժշտական կրթութ.* | I | 6 | 5 | 5 | - | - | - | 1 չի մասն. |
| | II | **3** | **3** | 2 | - | 1 | - | - |
| ***ուսանող. թիվ*** | | 59 | 55 | 49 | 3 | 3 | - | 4 |

**3. Լսեցին** – 2020-2021 ուստարվա մանկավարժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Նրանք ներկայացրեցին առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկաների բազաները և խմբերը, հեռակա ուսուցման 4-րդ կուրսի պրակտիկան կկազմակերպվի առցանց:

**Որոշեցին** – Աշխատանքները համարել կատարված:

ընթացիկ հարցեր

**4. Լսեցին –** 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի կայանալիք դասըթնացների հարցը:

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը հայտարարեց, որ դասընթացը մեկնարկելու է 2021 թվականի փետրվարի 9-ից լսարանային պարապմունքների տեսքով:

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 7

2021թ. փետրվարի 22-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
(բանավոր հարցման ձևով)

**ԼՍԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի /2021-2025թթ./ գործողությունների կատարման պլանի վերաբերյալ հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը: Նա համառոտ ներկայացրեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի /2021-2025թթ./ մշակման գործընթացը: Գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի անդամներին տրված հարցադրումների միջոցով քննարկվեց և պարզաբանվեց ֆակուլտետի գործողությունների կատարման պլանի մշակման ուղղությամբ կատարված և նախատեսվող աշխատանքների որոշ մանրամասներ և խորհրդատվություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաստատել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիրը /2021-2025թթ./ գործողությունների կատարման պլանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 8

2021թ. մարտի 15-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության
ֆակուլտետի խորհրդի նիստ
ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հեռակա ուսուցման 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքների հաշվետվություն
2. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների հաշվետվություն
3. ֆակուլտետի առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքը
4. ամբիոնների վարիչների հաշվետվությունը մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին
5. մագիստրատուրայի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների նախապատրաստում
6. ընթացիկ հարցեր

նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 16-ը

**1. Լսեցին** - Հեռակա ուսուցման 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքների հաշվետվության հարցը
**Արտահայտվեցին** –դեկանի տեղակալ Լ.Այվազյանը, ներկայացրեց գործընթացը՝ կազմված են բոլոր գրաֆիկները և աշխատանքը ընթանում է բնականոն հունով:
**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**2. Լսեցին** – 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների հաշվետվություն
**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի մարման արդյունքները
քննության մասնակցել է 415 ուսանող, 4 ուսանող ներկայացվել են հեռացման, 2 գտնվում են լուծարքային փուլում, 30-ը պայմանական տեղափոխված են:
**Որոշեցին** – Արդյունքները համարել բավարար:

**3. Լսեցին** – ֆակուլտետի առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ընթացքին վերաբերվող հարցը:
**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Նրանք ներկայացրեցին առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկաների ընթացքի մասին, շեշտադրելով ուսանողության շրջանում ոգևորության մասին առերես հանդիպումների շնորհիվ:
**Որոշեցին** – Աշխատանքները համարել կատարված:

**4. Լսեցին** - ամբիոնների վարիչների հաշվետվությունները մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին
**Արտահայտվեցին** –կերպարվեստի և երաժշտական մանկավարժության ամբիոնի վարիչները, ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը զեկուցեցին 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների ընթացքի մասին, համարելով կատարված աշխատանքները համապատասխան գրաֆիկներին:
**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**5. Լսեցին** - մագիստրատուրայի մանկավարժահետազոտական և մասնագիտական պրակտիկաների նախապատրաստում
**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը ներկայացրեցին պրակտիկայի ժամանակացույցը:
**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

ընթացիկ հարցեր
**6. ԼՍԵՑԻՆ** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Ամրաստանի Իսկոյանի դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:
**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա.Հակոբյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Ա.Եղիազարյանը,: Ելույթ ունեցողները նշեցին, որ Լիլիթ Իսկոյանը համալսարանում դասավանդում է 2010 թվականից, հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր մասնագիտական կարողություններ, բարեխիղճ և պատասխանատու է մանկավարժական գործունեության մեջ: Ունի համապատասխան քանակի գիտական հոդվածներ և մեթոդական ձեռնարկ: Ա.Բաղդասարյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական կարծիքը:
**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Ամրաստանի Իսկոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:
Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 16-ը:
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ-16

Դեմ- 0
Ձեռնպահ - 0

**7. ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Վահագն Ղազարյանի <<Օժտված երեխաների նկարչական գործունեության ակտիվացման ուղիները մասնագիտական կրթօջախներում>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, պրոֆեսոր Ա.Քեշիշյանը, պրոֆեսոր Ա.Եղիազարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Վահագն Խաչատրյանի <<Օժտված երեխաների նկարչական գործունեության ակտիվացման ուղիները մասնագիտական կրթօջախներում>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 16-ը:
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ- 16
Դեմ - 0
Ձեռնպահ – 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 9

2021թ. մարտի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

**ԼՍԵՑԻՆ** – Մոսկվայի քաղաքապետի կրթաթոշակին ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը, գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը: Ելույթ ունեցողները առաջարկեցին ներկայացնել Մոսկվայի քաղաքապետի կրթաթոշակի մշակութաբանության բաժնի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողուհի Սիմա Ռոբերտի Գրիգորյանցին, հաշվի առնելով լավ առաջադիմությունը և սոցիալական վիճակը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Սիմա Գրիգորյանցին նեկայացնել Մոկվայի քաղաքապետի կրթաթոշակի:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 10

2021թ. ապրիլի 21-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

**Լսեցին** – Ֆակուլտետի մանկավարժական և ուսումնական պրակտիկաներին վերաբերվող հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Ս.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ պրակտիկաները ընթացել են ժամանակացույցներին համաձայն համապատասխան ժամկետներում: Կազմակերպվել են պաշտպանությունները:

**Որոշեցին** – Կատարված աշխատանքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 11

2021թ. ապրիլի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2020-2021 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում
2. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում (զեկ.ամբիոնի վարիչներ)
3. ամբիոնների կատարած աշխատանքների հաշվետվություն (ամբիոններ)
4. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կատարման արդյունքների ամփոփում
5. ֆակուլտետի հեռակա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կատարման արդյունքների հաշվետվություն
6. ընթացիկ հարցեր

նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 19-ը

**1. Լսեցին** – 2020-2021 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը

**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ամփոփեց 2020-2021 ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքները.

4-րդ կուրս՝ քննություններին մասնակցել է 110 ուսանող, դրական ստացել են 88 ուսանող, լուծարքային փուլին մասնակցում է 22 ուսանող

2-րդ մագիստրատուրա՝ քննություններին մասնակցել է 18 ուսանող, դրական ստացել է 14 ուսանող, լուծարքային փուլին մասնակցում է 4 ուսանող:

**Որոշեցին** – Արդյունքները համարել բավարար:

**2. Լսեցին** - 2020-2021 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում (զեկ.ամբիոնի վարիչներ)

**Արտահայտվեցին** – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս. Էլբակյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ. Աղամյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը: Իրենց ելույթներում Ս.Էլբակյանը, Ս.Մելիքյանը և Կ.Աղամյանը նշեցին, որ կատարված են բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ անցկացված են նախապաշտպանությունները:

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**3. Լսեցին** - ամբիոնների կատարած աշխատանքների հաշվետվություն (ամբիոններ)

**Արտահայտվեցին** – երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս. Էլբակյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ. Աղամյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը: Իրենց ելույթներում Ս.Էլբակյանը, Ս.Մելիքյանը և Կ.Աղամյանը նշեցին, որ հաշվի առնելով ընդհանուր իրավիճակը աշխատանքները զրեթե չեն ընթանում, սակայն արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնը հրատարակել է հերթական մագիստրոսական հոդվածների ժողովածուն:

**Որոշեցին** – աշխատանքները համարել բավարար:

**4.Լսեցին** – 2020-2021 ուստարվա առկա ուսուցման մանկավարժական և ուսումնական, ուսումնահետազոտական պրակտիկաների կատարման արդյունքների ամփոփման հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Ս.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ պրակտիկաները ընթացել են ժամանակացույցներին համաձայն համապատասխան ժամկետներում, առկա և սիմուլյացիոն տարբերակներով: Կազմակերպվել են պաշտպանությունները:

**Որոշեցին** – Կատարված աշխատանքները համարել բավարար:

**5.Լսեցին** – ֆակուլտետի հեռակա ուսուցման մանկավարժական և ուսումնական պրակտիկաների կատարման արդյունքների հաշվետվության հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ պրակտիկաները ընթացել են ժամանակացույցներին համաձայն համապատասխան ժամկետներում, սիմուլյացիոն տարբերակներով: Կազմակերպվել են պաշտպանությունները:

**Որոշեցին** – Կատարված աշխատանքները համարել բավարար:

**Ընթացիկ հարցեր**

**6.Լսեցին** – 2020-2021 ուստարվա 4-րդ կուրսի կամավորական աշխատանքի համար հավելյալ միավորներ տրամադրելու հարցը

**Արտահայտվեցին** –ֆակուլտետի փոխդեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ավարտական (4-րդ) կուրսի այն ուսանողների անունները, որոնք արցախյան երրորդ պատերազմի ընթացքում համալսարանում կամավորական աշխատանքներին ցուցաբերել են ակտիվ մասնակցություն՝ Քրիստինե Խաչատրյանին (մշ.), Էդիտա Չանախչյանին (մշ.), Արմենուհի Հովսեփյանին (կերպ.), Անահիտ Հարությունյանին (կերպ.), Սեդա Հակոբյանին (հ.մ), Տիգրանուհի Միքաելյանին (հ.մ.), Լուսինեի Սիմոնյանին (հ.մ.), Լիլիթ Կարապետյանին (հ.մ.), Գոհար Զաքարյանին (հ.մ.) նաև կատարել են մասնագիտական կամավորական աշխատանք՝ «Հեքիաթային կիրճ» մանկական տուրիստական հանգստի կենտրոնում և ստացել համապատասխան փաստաթղթային հիմքեր՝ Թորոսյան Մարինե 200 ժամ:

**Որոշեցին** – տրամադրել 5 միավոր բոլոր վերընշված կամավորական գործունեություն կատարած ուսանողներին:

**7.ԼՍԵՑԻՆ** – հոգաբարձուների խորհրդի անդամության մեկ թեկնածու ներկայացնելու հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին քննարկելու լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Վազգենի Գալստյանի թեկնածությունը:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 19-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 19

Դեմ - 0

Ձեռնպահ – 0

**8. ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Շուշան Քոչարյանի <<Սովորողների տեղեկատվական գիտելիքների ձևավորման հիմքերը կերպարվեստի ուսուցման գործընթացում>> խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, պրոֆեսոր Ա.Քեշիշյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Շուշան Քաչարյանի <<Սովորողների տեղեկատվական գիտելիքների ձևավորման հիմքերը կերպարվեստի ուսուցման գործընթացում>> խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 19-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 19

Դեմ - 0
Ձեռնպահ – 0

**9. ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – կերպարվեստի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կ. Աղամյանը, պրոֆեսոր Ա.Քեշիշյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման անհրաժեշտ մերօրյա կրթօջախներում, այն անհրաժեշտ է դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Լիլիթ Ամիրջանյանի «Մատենական գեղանկարչության ուսուցման մեթոդիկան գեղարվեստական կրթօջախներում» խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 19-ը:
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ- 19
Դեմ - 0
Ձեռնպահ – 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 12

2021թ. մայիսի 25-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Ֆանբերգ Հրաչի Սարգսյանին ՀՀ վաստակավոր նկարչի կոչման ներկայացնելու հարցը

**ԼՍԵՑԻՆ** – Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Ֆանբերգ Հրաչի Սարգսյանին ՀՀ վաստակավոր նկարչի կոչման ներկայացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Աղամյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին Ֆ.Սարգսյանի տասնամյակների մանկավարժական փորձը, երկարամյա նկարչական գործունեությունը, մասնակցությունը ՀՀ և արտասահմանյան ցուցահանդեսներում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** –Ֆանբերգ Հրաչի Սարգսյանին ներկայացնել ՀՀ վաստակավոր նկարչի կոչմանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 13

2021թ. հունիսի 4-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

**Լսեցին** – Ֆակուլտետի 2-րդ կուրսերի մանկավարժական և ուսումնական պրակտիկաներին վերաբերվող հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ պրակտիկաները ընթացել են ժամանակացույցներին համաձայն համապատասխան ժամկետներում: Կազմակերպվել են պաշտպանությունները:

**Որոշեցին** – Կատարված աշխատանքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 14

2021թ. հունիսի 21-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

**Լսեցին** – Ֆակուլտետի 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական և ուսումնական պրակտիկաների ամփոփման հարցը:

**Արտահայտվեցին** – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարներ՝ Մ.Ավետիսյանը և Շ.Մաթևոսյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ պրակտիկաները ընթացել են ժամանակացույցներին համաձայն համապատասխան ժամկետներում: Կազմակերպվել են պաշտպանություններ, որի արդյունքում անբավարար ստացել է 1 ուսանող, պաշտպանությանը չի ներկայացել 7 ուսանող:

**Որոշեցին** – Կատարված աշխատանքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 15

2021թ. հուլիսի 6-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության
ֆակուլտետի խորհրդի նիստ
ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում (առկա, հեռակա)
2. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում (առկա, հեռակա)
3. ընթացիկ հարցեր

**նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 17-ը**

**1. Լսեցին** - 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների (առկա, հեռակա) ամփոփման հարցը

**Արտահայտվեցին** – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա առկա բակալավրիատի և մագիստրատուրայի, հեռակա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման արդյունքները

բակալավրիատ

| մասնագիտություն | քննությունները հանձնած | | հեռացված | |
|---|---|---|---|---|
| | առկա | հեռակա | առկա | հեռակա.. |
| մշակութ. | 14 | 6 | - | - |
| արվ.պատմ. և տես. | 8 | 3 | - | - |
| կերպարվեստ | 36 | 14 | - | - |
| երաժշտ.կրթ. | 23 | 26 | - | - |
| դկա | 16 | - | - | - |
| հագուստի մոդել. | 12 | - | - | - |

մագիստրատուրա

| մասնագիտություն | քննությունները հանձնած | հեռացված |
|---|---|---|
| կերպարվեստ | 6 | - |
| երաժշտ.կրթություն | 5 | - |
| դկա | 3 | - |
| արվ.տես., պատմ. և կառ. | 2 | - |
| մշակութաբանություն | 2 | - |

**Որոշեցին** – քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

**2. Լսեցին** – 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:
**Արտահայտվեցին** – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ. Այվազյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները.

| **բակալավրիատ** 1-3-րդ կուրսեր (առկա) | **ընդհանուր** | **քննությունները հանձնած** | **անբավարար** |
|---|---|---|---|
| | 298 ուս. | 220 | 78 |
| 1-3-րդ կուրսեր (հեռակա) | 95 ուս. | 68 | 27 |

| **մագիստրատուրա** **1-ին կուրս** | **ընդհանուր** | **քննությունները հանձնած** | **անբավարար** |
|---|---|---|---|
| | 40 ուս. | 28 | 12 |

**Որոշեցին** – քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ